ՆԱԽԱԳԻԾ 37

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՈՐՈՇՈՒՄ

« » ________ 2011 թվականի N -Ա

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N 1369-Ն որոշման 2.1 կետի 5-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հաստատել Միջազգային զարգացման ընկերակցության միջոցներով ֆինանսավորվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապան քաղաքի նստավայրի նոր շենքի (պայմանագիր՝ N JR2/W2/017) կառուցման նպատակով 2011 թվականի մարտի 21-ին անցկացված և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Դատաիրավական բարեփոխումների ծրագրի կառավարման խորհրդի՝ 2011 թվականի մարտի 29-ին հաստատված N JR2/W2/017 մրցույթի արդյունքները՝ 592,814,884 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) պայմանագրային արժեքով՝ մրցույթի հաղթող ճանաչելով «ՀԱԷԿ-ի Շինարարություն» փակ բաժնետիրական ընկերությունը:

Հ. Թովմասյան

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ին ՆԻՍՏԻ ԹԻՎ 42 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ**

| Իրավական ակտի հիմնավորումը | |
|---|---|
| 1. | Անհրաժեշտությունը |
| | Սույն իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը ծագել է Միջազգային Զարգացման Ընկերակցության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված «Դատաիրավական բարեփոխումներ երկրորդ ծրագիր»-ով նախատեսված ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում դատարանի նոր շենքի կառուցումը իրականացնելու համար:<br><br>Սույն իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N 1369-Ն որոշման 2.1 կետի 5-րդ ենթակետի պահանջներից, քանի որ իրավական ակտով հաստատվող պայմանագրի արժեքը գերազանցում է 350 մլն դրամին համարժեք գումարը: |
| 2. | Ընթացիկ իրավիճակը և խնդիրները |
| | ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապան քաղաքի նստավայրը հանդիսանում է մարզի դատարանի կենտրոնական նստավայրը: Ներկայումս դատարանի Կապան քաղաքի նստավայրը օգտագործում է իր տարածքը այլ օգտագործողների հետ համատեղ՝ զբաղեցնելով Կապանի ոստիկանության շենքի մի հատվածը, ինչը չի համապատասխանում դատարանների շենքերին ներկայացվող չափանիշներին և դատարանում պատշաճ ապահովված չէ դատարանի բնականոն և անվտանգ աշխատանքի կազմակերպումը: Այդ իսկ պատճառով տվյալ նստավայրի համար տեղական մարմինների կողմից հատկացվել է հողատարածք, որի սահմաններում նախագծվել է նոր դատարանի շենքային համալիրը: Շենքային համալիրի կառուցման պարագայում տվյալ նստավայրի դատարանը ամբողջապես կապահովվի անհրաժեշտ այնպիսի աշխատանքային մակերեսներով, որոնք կհամապատասխանեն դատարանի շենքերին բնորոշ միջազգային չափանիշներին: |
| 3. | Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը |
| | Սույն իրավական ակտի ընդունմամբ չեն նախատեսվում տվյալ բնագավառում ներկայումս իրականացվող քաղաքականության էական փոփոխություն: Հայաստանի Հանրապետությունում դատարանների շենքերի կառուցումը և վերակառուցումը, դրանց համապատասխանեցման գործընթացը իրականացվում է ՄԶԸ հետ կնքված միջազգային համաձայնագրերի համաձայն 2001թ. սկսած և ներկայումս նախատեսվում է շարունակել առնվազն մինչև 2012թվականի ավարտը: |
| 4. | Կարգավորման նպատակը և բնույթը |
| | Սույն իրավական ակտի կարգավորման նպատակն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության անունից ծրագրի պատվիրատուին մրցույթի հաղթողի հետ պայմանագրային իրավահարաբերությունների ծագման իրավասություն շնորհելն է, ինչը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N 1369-Ն որոշման 2.1 կետի 5-րդ ենթակետի պահանջներից, քանի որ իրավական ակտով հաստատվող պայմանագրի արժեքը գերազանցում է 350 մլն դրամին համարժեք գումարը: |
| 5. | Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք |
| | Սույն իրավական ակտի նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից: |
| 6. | Ակնկալվող արդյունքը |

| | |
|---|---|
| | Սույն իրավական ակտի ընդունման արդյունքում նախատեսվում է կապալի պայմանագրի կնքում, որի իրականացման արդյունքում մինչև 2012 թվականի ավարտը շահագործման պետք է հանձնվի ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապան քաղաքի նստավայրի նոր շենքը՝ շուրջ 1600քմ ընդհանուր աշխատանքային մակերեսով և հարակից բարեկարգված բակով: |
| 7. | Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են) |
| | |

| Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը |
|---|
| Սույն իրավական ակտի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: Համապատասխան միջոցները Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում արդեն իսկ նախատեսված են, ինչպես նաև համապատասխան միջոցներ են պլանավորված նաև 2012 թվականի պետական բյուջեում: |

| Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք | |
|---|---|
| 1 | Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը |
| | Նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում |
| 2 | Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը |
| | Նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև 09.03.2007թ. ստորագրված «Դատաիրավական բարեփոխումներ երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի դրույթներից և համապատասխանում է Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին: Համաձայնագրի դրույթների համաձայն գնման ամբողջ գործընթացը և ներկայացված կազմակերպությանը հաղթող ճանաչելու համապատասխան միջնորդությունները պատշաճ համաձայնեցվել են Համաշխարհային Բանկի հետ: |
| 3 | Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են) |
| | Նախագիծը մշակված է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների պահպանմամբ: |

| Տեղեկանք հասարակության մասնակցության մասին | |
|---|---|
| 1 | հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը |
| | Սույն իրավական ակտի նախագծի վերաբերյալ հասարակությունը չի իրազեկվել, քանզի սույն նախագծի կարգավորման առարկա հանդիսացող գնման գործընթացը կարգավորվում է Համաշխարհային Բանկի կողմից սահմանված «Ուղեցույցներ: ՁՎՄԲ փոխառություններ և ՄԶԸ վարկեր» (2004թ. Մայիս ամսին ընդունված և 2006թ. հոկտեմբեր ամսվա խմբագրությամբ փոփոխված) փաստաթղթով: Մասնավորապես, տվյալ ուղեցույցների 2.47 կետի պահանջների համաձայն վարկատու երկրները մրցութային հայտեր ներկայացնելու պահից ընդուպ մինչև պաշտոնապես մրցույթի հաղթող ճանաչելը չեն կարող հրապարակել գնման գործընթացի գնահատման, պարզաբանման և պայմանագրերի շնորհման վերաբերյալ տեղեկություններ որևէ երրորդ անձանց, ովքեր ուղղակիորեն և ի պաշտոնե չեն առնչվում տվյալ գնման գործընթացի հետ:<br>Ելնելով վերը նշվածից, հասարակության իրազեկումը տեղի է ունենալու գնման մրցույթի հաղթողի հետ կապալի պայմանագիրը կնքելուց հետո՝ Համաշխարհային Բանկի կողմից սահմանված եղանակով և ծավալով մամուլում համապատասխան հայտարարություն հրապարակելու եղանակով: |
| 2 | հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին |
| | Սույն իրավական ակտի նախագծմանը և/կամ քննարկումներին հասարակությունը մասնակցություն չի ունեցել |
| 4 | Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են) |
| | |

***ամփոփաթերթ***

Նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

| Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության. Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| ՀՀ ֆինանսների նախարար 12.04.2011թ. 1/4.2/77411-11 | ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք | - | - |

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի հետ կապված
<u>ՀՀ վարչապետի 02.02.2009թ. թիվ 02/01.5/601-09 հանձնարարականի համաձայն լրացուցիչ ներկայացվող տեղեկությունների և փաստաթղթերի մասին</u>

| ՀՀ | Հանձնարարականով պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը | «ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի դատարանի շենքի կառուցում», No. JR2/W2/017 պայմանագրի մրցույթի վերաբերյալ |
|---|---|---|
| 1. | Ծրագրի կառավարման խորհրդի նիստի արձանագրությունը | Կառավարման խորհրդի 29.03.2011թ. կայացած նիստի թիվ 92-11 արձանագրության քաղվածքը կցվում է, առդիր՝ 1 էջ |
| 2. | Մրցույթին դիմաց ընկերությունների, կարճ ցուցակում ներառված ընկերությունների և հայտեր ներկայացրած ընկերությունների ցանկերը | Տվյալ մրցույթի կանոններով կարճ ցուցակ չի կազմվում և մրցույթը բաց է բոլոր շահագրգիռ և իրավասու կազմակերպությունների համար:<br><br>Մրցույթին դիմած կազմակերպությունների ցանկ.<br><br>- «Հիդրոէներգաշին» ՓԲԸ<br>- «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ<br>- «Արարատշին» ՍՊԸ<br><br>Հայտեր ներկայացրած ընկերությունների ցանկ.<br>- «Հիդրոէներգաշին» ՓԲԸ<br>- «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ<br>- «Արարատշին» ՍՊԸ |
| 3. | Հայտ ներկայացրած ընկերությունների տեխնիկական առաջարկների գնահատականները | Տվյալ մրցույթի կանոններով տեխնիկական առաջարկի գնահատում չի իրականացվում. սակայն հայտերը գնահատվում են մրցույթի պայմաններին և որակավորման նվազագույն պահանջներին էապես բավարարելու իմաստով: Նման գնահատման արդյունքում պարզվել էմ որ հետևյալ կազմակերպությունների հայտերը մրցույթով սահմանված որակավորման պահանջներին էապես բավարարում են:<br><br>- «Հիդրոէներգաշին» ՓԲԸ<br>- «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ<br><br>«Արարատշին» ՍՊԸ հայտը որակազրկվել է հետևյալ հիմքերով:<br>- Հայտատուն իր մրցութային հայտին չի կցել մրցույթի պայմաններով պահանջվող բանկային երաշխիքը՝ հայտի ապահովման նպատակով: |
| 4. | Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկի գինը և նախագծա-նախահաշվային փաստաթղթերով ներկայացված գինը | Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկի գինը.<br><br>Խումբ 1. <u>Որակավորման բոլոր պահանջներին էապես չբավարարող ընկերությունների առաջարկները առանց թվաբանական սխալները ուղղելու՝</u><br><br>- «Արարատշին» ՍՊԸ՝ 621,604,831 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ<br><br>Խումբ 2. <u>Որակավորման բոլոր պահանջներին էապես բավարարող ընկերությունների առաջարկները թվաբանական սխալները ուղղելու արդյունքում՝</u><br><br>- «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ՝ 592,814,884 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ<br>- «Հիդրոէներգաշին» ՓԲԸ՝ 657,047,794 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ<br><br>Նախագծա-նախահաշվային փաստաթղթերով անկախ փորձաքննությամբ հաստատված գինը.<br><br><u>605,501,540 ՀՀ դրամ</u><br>/Կազմված է նոյեմբեր 2010թ./ |

| | | |
|---|---|---|
| 5. | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակած և նախագծի տեխնիկական փորձաքննություն անցկացրած կազմակերպությունների անվանումները | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակած կազմակերպության անվանումը<br>*«Բաբայան Լաստ Նախագիծ» ՍՊԸ*<br><br>Նախագծի տեխնիկական փորձաքննություն անցկացրած կազմակերպության անվանումը:<br><br>*«Քաղսեյսմշին և Փորձաքննություն» ՄՊԸ* |
| 6. | Լրատվական միջոցներում տեղադրված մրցույթի հայտարարության տեքստը | *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 21.02.2011թ. համարում տեղադրված հայտարարության լուսապատճեն կցվում է՝ 1 էջ:* |
| 7. | Օտարերկրյա պետությունների և վարկատու կազմակերպությունների կողմից մրցույթի արդյունքները հավանության արժանացման վերաբերյալ գրություններ | Ըստ ծրագրի գնումների պլանի տվյալ մրցույթի արդյունքները ենթակա են Համաշխարհային բանկի կողմից նախնական հավանության: Այդ իսկ պատճառով սկզբից մրցութային փաստաթղթերի նախագիծը, իսկ հետո նաև մրցույթի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է Համաշխարհային բանկի հաստատմանը:<br><br>Տվյալ մրցույթի արդյունքները սահմանված կարգով հաստատվել են նաև Համաշխարհային բանկի կողմից /կցվում է 2 թերթ/: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԾԻԳ» ՊՀ

Ապրիլ 2011թ.